

## Ալմազյան. Էմիր Կուստուրիցայի երևանյան համերգին ընդառաջ

Դեկտեմբերի 25-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի կունենա սերբ հանրահայտ ռեժիսոր Էմիր Կուստուրիցայի և TNSO նվագախմբի համերգը:

Կազմակերպիչներն են «Almazian Productions»-ը, «Mezzo Production»-ը և «AnMart Productions»-ը՝ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: Համերգը նվիրված է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին:

Aysor.am-ը զրուցեցինք Կուստուրիցայի երևանյան այցելության կազմակերպիչ Խաչատուր Ալմազյանի հետ, ով «Almazian Symphony» նվագախմբի հիմնադիրն է՝ սերբ թավջութակահարուհի Թամարա Սավիչի հետ միասին:



**-Պարոն Ալմազյան, 2010թ. Դուք կազմակերպեցիք Էմիր Կուստուրիցայի առաջին այցելությունը Հայաստան՝ հանդես գալով նրա պրոդյուսերի դերում:**

- Այո, երբ Հայաստանում հայտնի դարձավ, որ իմ «Almazian Symphony» նվագախումբը Էմիր Կուստուրիցայի հրավերով ելույթ է ունեցել նրա առաջին Kustendorf Film & Music Festival փառատոնի բացման արարողությանը, և երբ «Երևան» ամսագիրը հրապարակեց հարցազրույցն Էմիրի և ինձ հետ, ինձ զանգահարեցին Հայաստանի մշակույթի

Նախարարությունից՝ Էմիրի և TNSO-ի համերգ կազմակերպելու խնդրանքով:

**-Դա Ձեր առաջին պրոդյուսերական փորձն էր:**

-Ոչ, բնականաբար: Պրոդյուսերությունն սկսել եմ այն ժամանակ, երբ ստեղծում էի իմ կոլեկտիվը: Զանի որ չէի ուզում որևէ մեկից կախված լինել և ուզում էի ինքս իրացնել իմ ստեղծագործական ծրագրերը, անել այնպես, ինչպես մտածում էի: Հետագայում այդ փորձը թույլ տվեց ինձ նաև այլ նախագծեր իրականացնել: Բայց Էմիր Կուստուրիցա արվեստագետի այցելությունը կազմակերպելն, իհարկե, ավելի քան լուրջ հայտ է:

**- Դուք երկար տարիներ բարեկամություն եք անում Կուստուրիցայի հետ: Արդյո՞ք այդ փաստը նշանակություն ունի Ձեր համատեղ նախագծերի իրականացման համար:**

-Բնականաբար, տարիների մեր բարեկամությունը պիտի անդրադանար նաև մեր համատեղ ստեղծագործական ծրագրերի վրա: Երբ բարեկամություն ես անում նման մեծության ստեղծագործողի հետ, բնականաբար՝ գիտես նրա նախապատվությունները, սերը, կամ հակառակը, ինչ-որ բանի հանդեպ նրա բացասական վերաբերմունքը, դա օգնում է ամեն ինչ շատ ավելի ճիշտ կազմակերպել:

**-Ի՞նչ տպավորություններ ունեցավ Կուստուրիցան Հայաստանից:**

- Լավագույն: Շատ մեծ տպավորություն ստացավ Փարաջանովի և Ցեղասպանության թանգարաններից: Էմիրն ասաց, որ հիացած է սեփական պատմության հանդեպ հայերի վերաբերմունքից:

**-Ավելի վաղ ՉԼՍ-ներում տեղեկատվություն եղավ այն մասին, թե Էմիր Կուստուրիցայի և TNSO-ի համերգը կայանալու է Նոյեմբերի 19-ին: Ո՞րն էր օրը փոխելու պատճառը:**

-Իրականում համերգը սկզբում նախատեսված էր հոկտեմբերի վերջին: Ամսաթիվը փոխվեց չորս անգամ: Ինչպես գիտեք, Էմիրն ավարտում է իր նոր ֆիլմի՝ «Ծիր կաթինի» նկարահանումները՝ Մոսկվա Բելուչիի գլխավոր դերակատարմամբ: Նկարահանումների ժամանակացույցը հաճախ էր փոխվում և դա հիմնականում կախված է եղանակային պայմաններից, այլ ֆիլմերում նկարահանվող դերասանների զբաղվածությունից և այլն: Տեղափոխվեց նրանց մոսկովյան համերգը, իսկ շրջագայությունը Լատինական Ամերիկա առհասարակ հանվեց:



**-Տեղյակ ենք նաև, որ Ձեր նվագախումբը ձայնագրել է երաժշտություն «Ծիր կաթին» ֆիլմի համար: Իսկ նկարահանումներին դուք նույնպե՛ս ներկա եք լինում:**

-Շատ հաճախ լինում եմ: Անսահման հետաքրքիր է տեսնել, թե ինչպես է ֆիլմ ստեղծվում: Հատկապես, երբ աշխատում են Էմիրը և նման ֆանտաստիկ դերասանական կազմ: Մոնիկայից բացի ֆիլմում ընդգրկված են հանճարեղ դերասան Միկի Մանոյլովիչը (կինոդիտողները նրան գիտեն նրա գլխավոր դերակատարումներով «Անդերգրաունդ» և «Հայրիկը գործուղման է» ֆիլմերում) և սերբ հիանալի երիտասարդ դերասանուհի Սյոբոդա Միչալովիչը: Ի դեպ, ես նույնպես խաղում եմ այդ ֆիլմում, մեծ դեր չէ, բայց տեսարանները Մոնիկա Բելուչիի հետ են...

**-Պարոն Ավմազյան, հարցազրույցներից մեկում ասել եք, թե կուզենայիք կազմակերպել ֆիլմի երևանյան պրեմիերան:**

-Այն ժամանակ ասել էի՝ «կուզենայի», իսկ հիմա կարող եմ վստահաբար ասել, որ անպայման դա կանեմ:

**-Ստեղծագործական ի՞նչ ծրագրեր ունեք գալիք տարվա համար:**

-2016 թվականին, ֆիլմի երևանյան պրեմիերայից բացի, մենք ռուսաստանցի պրոդյուսեր Անետա Մարտիրոսյանի հետ համատեղ ծրագրում ենք Մոսկվայում կազմակերպել փառատոն և հրավիրել այս ժանրում ստեղծագործող առաջատար կատարողներին: Անետա Մարտիրոսյանը Մոսկվայում, Բարվիխա մեծ համերգասրահում մեր դեբյուտի գլխավոր կազմակերպիչն էր: Ի դեպ, ծրագրվում է երկրորդ ելույթը Մոսկվայում, Երաժշտության միջազգային տան մեծ սրահում: Ուզում ենք հրավիրել Classical Crossover ժանրի բոլոր առաջատար կատարողներին: Մարտին ծրագրավորված է «Almazian symphony»-ի համերգը Երևանում, և այդ նախագիծը մենք անում ենք «Mezzo production»-ի հետ միասին: Ուզում եմ կազմակերպել Էմիրի և նրա նվագախմբի համերգային շրջագայությունն ԱՄԷ-ով: Մի մեծ նախագիծ էլ կա, բայց առայժմ չեի ուզենա խոսել այդ մասին: Վստահ եմ, սա հաճելի անակնկալ կլինի:

Նշենք, որ Խաչատուր Ալմազյանի կենսագրությունում հատուկ տեղ է զբաղեցնում համագործակցությունն Էմիր Կուստուրիցայի հետ: Kustendorf Film & Music Festival -ում ելույթից հետո ռեժիսորն առաջարկել է նվագախմբին մասնակցել «Cool Water» («Սառը ջուր») կինոնկարի սաունդտրեկի ձայնագրությանը, որի համապրոդյուսերն է Ջոնի Դեպը (ներկա պահին ֆիլմի նկարահանումները հետաձգված են): «Երևան» ամսագրի 2008թ. սեպտեմբերյան համարը լույս է տեսել՝ շապիկին Կուստուրիցայի և Ալմազյանի նկարներով: 2010թ. Խաչատուր Ալմազյանը կազմակերպեց Կուստուրիցայի և The No Smoking Orchestra-ի համերգը Երևանում: «Almazian Symphony»-ն ձայնագրեց Կուստուրիցայի նոր ֆիլմի՝ «Ծիր կաթինի» (On The Milky Road) սաունդտրեկը. ֆիլմի գլխավոր դերում նկարահանվել է համաշխարհային կինոյի աստղ Մոնիկա Բելուչին: Ֆիլմի պրեմիերան տեղի կունենա 2016թ. Կաննի փառատոնում:

22.12.15, 10:29

Լիա Խոջոյան

Տեքստում սխալ կամ վրիպակ նկատելու դեպքում, ուղարկեք խմբագրին հաղորդագրություն՝ նշելով տվյալ սխալը, այնուհետև սեղմելով Ctrl-Enter: